

Հաստատված է

«ՆԲԿ-ՇՀԱՊԶԲ-16/3» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի
2016թ. «փետրվարի» «5»-ի թիվ «01» որոշմամբ

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «
ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ» ՁԵՌՔԵՐԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը,
քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅՆԵՐԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ -Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝
« ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ» ՁԵՌՔԵՐԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՇԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ (այսուհետև՝ Պատվիրատու)՝ դեղորայքի և պտվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է **«ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք.Նոյեմբեյան, Գարեգին Նժդեհի 15, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող <<7>> -րդ աշխատանքային օրվա ժամը <<14:00>>-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ **18 փետրվարի 2016թ. ժամը 14:00-ն**: Ընդ որում, փաստաթղթային

ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի

Էլեկտրոնային փոստի հասցեն է noyemberyanihivandanoc@mail.ru

հեռախոսահամարն է՝ (0-99) 95-44-54

(0-55) 95-44-54

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար՝ դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են 202 չափաբաժինների

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)
1	2	3	4
1	Պրոմեդոլ Promedol	լուծույթ մ/մ և է/մ ներարկման	20մգ/մլ, 1մլ ամպուլներ (100(20x5))
2	Ֆենտանիլ 0,005% ներարկման լուծույթ Fentanyl 0,005% solution for injection	լուծույթ ներարկման	0,05մգ/մլ, 2մլ ամպուլներ (100/20x5/)
3	Մորֆինի հիդրոքլորիդ 1% ներարկման լուծույթ Morphine hydrochloride 1% solution for injection	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (100/20x5/)
4	Դիազեպամ Ալկալոիդ 10մգ/2մլ Diazepam Alkaloid 10mg/2ml	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	10մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10)
5	Դիազեպամ 5մգ Diazepam 5mg	դեղահատեր	5մգ (24)
6	Դիթիլին Dithylin	լուծույթ ներարկման	20մգ/մլ, 5մլ ամպուլներ (5, 10/1x10/, 10/2x5/)
7	Թիոպենտալ 0,5գ Thiopental 0,5g	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	500մգ, ապակե սրվակներ (40)
8	Կալիպսոլ Calypsol	լուծույթ ներարկման	500մգ/10մլ, 10մլ սրվակներ (5)
9	Միդազեմ 15մգ/3մլ Midazem 15mg/3ml	լուծույթ ներարկման	15մգ/3մլ, 3մլ ամպուլներ (5)
10	Տրակրիում Tracrium	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 2,5մլ ամպուլներ (5)
11	Թիոպենտալ 1գ Thiopental 1g	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ (40)
12	Անալգին Analgin	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	500մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
13	Կետոնալ 100մգ/2մլ ներարկման լուծույթ Ketonal 100mg/2ml solution for injection	լուծույթ ներարկման	100մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10/2x5/)
14	Լիդոկայինի հիդրոքլորիդ Lidocaine hydrochloride	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
15	Նովոկային 0,5% լուծույթ Novocain 0,5% solution	լուծույթ ներարկման	5մգ/մլ, 250մլ պլաստիկ տարա
16	Դիկլոֆենակ 25մգ/մլ Diclofenac 25mg/ml	լուծույթ մ/մ ներարկման	25մգ/մլ, 3մլ ամպուլներ (5)
17	Դիկլոֆենակ 50մգ Diclofenac 50mg	դեղահատեր թաղանթապատ, աղելույծ	50մգ, բլիստերում (20/2x10/)
18	Ացետիլսալիցիլաթթու Acetylsalicylic acid	դեղահատեր	500մգ, բլիստերում (10)
19	Պարացետամոլ Paracetamol	դեղահատեր	500մգ, բլիստերում (10)
20	Պարացետամոլ երեխաների համար Paracetamol for children	դեղակախույթ ներքին ընդունման	120մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ
21	Բիսեպտոլ Biseptol	դեղահատեր	400մգ+80մգ (20)
22	Բուպիվակային ՎՊՎ Սպինալ 0,5% շեմի Bupivacaine WPW Spinal 0,5% Heavy	լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	5մգ/մլ, 4մլ ամպուլներ (5)
23	Սպալմալգոն ներարկման լուծույթ 2մլ Spasmalgon solution for injection 2ml	լուծույթ ներարկման	1000մգ/2մլ+4մգ/2մլ+ 0,04մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10)
24	Սպալմալգոն ներարկման լուծույթ 5մլ Spasmalgon solution for injection 5ml	լուծույթ ներարկման	2500մգ/5մլ+10մգ/5մլ+0,1մգ/5մլ, 5մլ ամպուլներ (5,10)
25	Դրոտավերին Drotaverine	լուծույթ ներարկման	40մգ/2մլ (2մլ), 2մլ ամպուլներ (10)
26	Դրոտավերինի հիդրոքլորիդ	դեղահատեր	40մգ,

	Drotaverine hydrochloride		բիստերում (20/2x10/)
27	Ատրոպինի սուլֆատ Atropine sulfate	լուծույթ ներարկման	1մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
28	Պապավերինի հիդրոքլորիդ 2% ներարկման լուծույթ Papaverin hydrochloride 2% solution for injection	լուծույթ ներարկման	20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
29	Մագնեզիումի սուլֆատ Magnesium sulfate	լուծույթ ներարկման	250մգ/մլ, 5մլ ամպուլներ (10/1x10/, 10/2x5/)
30	Պրոնորան Pronoran	դեղահատեր թաղանթապատ, երկաքարտոն ձեռքագատմամբ	50մգ, բիստերում (30/2x15/)
31	Պոլիգլյուկին Polyglucin	լուծույթ կաթիլաներարկ-ման	60մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ
32	Պոլիգլյուկին Polyglucin	լուծույթ կաթիլաներարկ-ման	60մգ/մլ, 500մլ, պլաստիկ փաթեթ
33	Ռեոպոլիգլյուկին Rheopolyglucin	լուծույթ կաթիլաներարկ-ման	100մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ
34	Ռեոպոլիգլյուկին Rheopolyglucin	լուծույթ կաթիլաներարկ-ման	100մգ/մլ, 500մլ պլաստիկ փաթեթ
35	Հեմոդեզ Haemodesum	լուծույթ կաթիլաներարկ-ման	60մգ/մլ+5,5մգ/մլ+ 0,42մգ/մլ+0,38մգ/մլ+ 0,005մգ/մլ+0,23մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ
36	Հեմոդեզ Haemodesum	լուծույթ կաթիլաներարկ-ման	60մգ/մլ+5,5մգ/մլ+ 0,42մգ/մլ+0,38մգ/մլ+ 0,005մգ/մլ+0,23մգ/մլ, 500մլ պլաստիկ փաթեթ
37	Գլյուկոզ Glucosa	լուծույթ կաթիլաներարկ-ման	50մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ
38	Գլյուկոզ Glucosa	լուծույթ կաթիլաներարկ-ման	50մգ/մլ, 500մլ, պլաստիկ փաթեթ
39	Գլյուկոզ 10% Glucose 10%	լուծույթ կաթիլաներարկ-ման	100մգ/մլ, 200մլ, պլաստիկ փաթեթ
40	Նատրիումի քլորիդ Sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ-ման	9մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ
41	Նատրիումի քլորիդ Sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ-ման	9մգ/մլ, 500մլ, պլաստիկ փաթեթ
42	Նատրիումի քլորիդ Sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ-ման	9մգ/մլ, 100մլ, պլաստիկ փաթեթ
43	Նատրիումի քլորիդ Sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ-ման	9մգ/մլ, 1000մլ, պլաստիկ փաթեթ
44	Ռինգեր Ringer	լուծույթ կաթիլաներարկ-ման	8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,33մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ
45	Ռինգեր Ringer	լուծույթ կաթիլաներարկ-ման	8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,33մգ/մլ, 500մլ, պլաստիկ փաթեթ
46	Կալիումի քլորիդ Kalium chloride	լուծույթ ն/ե կաթիլաներարկ- ման	40մգ/մլ, 200մլ պլաստիկ փաթեթ
47	ՕսլաԴեքս OslaDex	լուծույթ կաթիլաներարկ-ման	60մգ/մլ, 500մլ պլաստիկ փաթեթներ
48	Մանի-Տեք Manni-Tech	լուծույթ կաթիլաներարկ-ման	10մգ/մլ, 400մլ, պլաստիկ տարա
49	Նատրիումի հիդրոկարբոնատ 8,4% 20մլ	լուծույթ ներարկման	8,4%, 20մլ
50	Ջուր ներարկման 500մլ Water for injection 500ml	լուծույթ ներարկման	500մլ, պլաստիկ փաթեթ
51	Ջուր ներարկման Water for injection	լուծույթ ներարկման	1մլ, 2մլ ամպուլներ (10)
52	Ջուր թորած 3000մլ	լուծույթ ներարկման	3000մլ, ֆլակոն
53	Նատրիումի քլորիդ Sodium chloride	լուծույթ ներարկման	9մգ/մլ, 5մլ, 5մլ ամպուլներ (10, 10/2x5/)
54	Գլյուկոզ 40% Glucosa 40%	լուծույթ ներարկման	400մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)
55	Դեքսամեթազոն Dexamethasone	լուծույթ ներարկման	4մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
56	Դիմեդրոլ Dimedrol	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
57	Դիմեդրոլ Dimedrol	դեղահատեր	50մգ (10)
58	Պրեդնիզոլոն Prednisolon	դեղահատեր	5մգ, բիստերում (100/10x10/)
59	Կալցիումի գլյուկոնատ Calcium gluconate	լուծույթ ներարկման	1գ/10մլ (5մլ), 5մլ ամպուլներ (10)

60	Նատրիումի թիոսուլֆատ Sodium thiosulfate	լուծույթ ն/ե ներարկման	300մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)
61	Կալցիումի գլյուկոնատ Calcium gluconate	դեղահատեր	500մգ (10)
62	Ստրոֆանտին-Գ Strophanthin-G	լուծույթ ներարկման	0,25մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
63	Նիտրո Nitro	խտանյութ կաթիլաներարկ- ման լուծույթի	5մգ/մլ, 2մլ ամպուլներ (5)
64	Կորդարոն Cordarone	լուծույթ ներարկման	150մգ/3մլ (3մլ), 3մլ ամպուլներ (6)
65	Կորդարոն Cordarone	դեղահատեր բաժանելի	200մգ (30)
66	Էգիլոկ Egilok	դեղահատեր	25մգ, ապակե տարայում (60)
67	Կարդիկետ Kardiket	դեղահատեր երկարատև ձեռքագատմամբ	40մգ, բլիստերում (20/2x10/, 50/5x10/)
68	Էնալապրիլ 10մգ Enalapril 10mg	դեղահատեր	10մգ, բլիստերում (20/2x10/)
69	Նիտրոգլիցերին Nitroglycerin	դեղահատեր ենթալեզվային	0.5մգ (40)
70	Դիգոքսին Digoxin	դեղահատեր	0,25մգ, բլիստերում (40)
71	Պանանգին Panangin	խտանյութ կաթիլաներարկ- ման լուծույթի	400մգ/10մլ+ 452մգ/10մլ, 10մլ ամպուլներ (5)
72	Նիֆեդիպին Nifedipin	դեղահատեր թաղանթապատ	10մգ, բլիստերում (50/5x10/)
73	Ատենոլոլ 50մգ Atenolol 50mg	դեղահատեր	50մգ, բլիստերում (30/3x10/)
74	Ամլոդիպին Amlodipine	դեղահատեր բաժանելի	5մգ (10)
75	Ամլոդիպին Amlodipine	դեղահատեր բաժանելի	10մգ (10)
76	Ադրենալին Adrenalin	լուծույթ ներարկման	1,82մգ/մլ, 1մլ ամպուլներ բլիստերում (5, 10/2x5/), 1մլ ամպուլներ (5,10)
77	Կոֆեին-նատրիումի բենզոատ Coffein-natrium benzoate	լուծույթ ներարկման	0.1գ/մլ (1մլ), 1մլ ամպուլներ (10)
78	Վալիդոլ Validol	դեղահատեր	0.06գ, (6,12/2x6/, 10, 20)
79	Դիբազոլ ներարկման լուծույթ 1մլ Dibazol solution for injection 1ml	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
80	Կորդիամին Cordiamin	լուծույթ ներարկման	250մգ/մլ (2մլ), 2մլ ամպուլներ (5, 10)
81	Կատվախտի հանուկ Valerian extract	դեղահատեր թաղանթապատ	20մգ, բլիստերում (10) և ապակե տարայում (50)
82	Կատվախտի ոգեթուրմ Valeriane tincture	ոգեթուրմ	200մգ/մլ, 30մլ ապակե շշիկ
83	Մեզատոն Mesaton	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
84	Պրեստարիոն 5մգ Prestarium 5mg	դեղահատեր թաղանթապատ	5մգ, պլաստիկ տարայում (30)
85	Գլյուկոզի նկալիումի քլորիդի լուծույթ Solution glucose with potassium chloride	լուծույթ, կաթիլաներարկման	45,04մգ/մլ + 3,96մգ/մլ, 222մլ, պլաստիկ փաթեթ
86	Դիգոքսին Digoxin	լուծույթ ներարկման	0,25մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
87	Լիզինոպրիլ Lisinopril	դեղահատեր	20մգ, բլիստերում (20/2x10/)
88	Դոպմին Dopmin	խտանյութ կաթիլաներարկ- ման լուծույթի	40մգ/մլ, 5մլ ամպուլներ (5)
89	Անապրիլին 40մգ Anaprilin 40mg	դեղահատեր	40մգ (50/5x10/, 50/2x25/)
90	Կարվեդիլոլ 12,5մգ Carvedilol 12,5mg	դեղահատեր	12,5մգ, բլիստերում (40/4x10/)
91	Էնալապրիլ 5մգ Enalapril 5mg	դեղահատեր	5մգ, բլիստերում (20/2x10/)
92	Կարմետադին Carmetadine	դեղահատեր թաղանթապատ, կարգավորվող ձեռքագատմամբ	35մգ (60/2x30/)
93	Կապտոպրիլ Captopril	դեղահատեր	25մգ, բլիստերում (20/2x10/)

94	Կոկարբօքսիլազի հիդրոքլորիդ Cocarboxylase hydrochloride	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	50մգ, ամպուլներ (5)
95	Վիտամին C- Ասկորբինաթթու 5% 2մլ Vitamin C-Ascorbic acid 5% 2ml	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
96	Վիտամին C- Ասկորբինաթթու 5% 5մլ Vitamin C-Ascorbic acid 5% 5ml	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)
97	Ասկորբինաթթու գլյուկոզով Ascorbic acid with glucose	դեղահատեր	100մգ+877մգ (10)
98	Վիտամին B համալիր Vitamin B complex	լուծույթ ներարկման	10մգ/2մլ+2մգ/2մլ+ 10մգ/2մլ+ 100մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10)
99	Վիտամին B6 (Պիրիդօքսին) Vitamin (Pyridoxine)	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
100	Վիտամին B12- Ցիանոկոբալամին Vitamin B12- Cyanocobalamin	լուծույթ ներարկման	0.5մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
101	Վիտամին B1-Թիամինի քլորիդ Vitamin B1- Thiamine chloride	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
102	Նիկոտինաթթու Nicotinic acid	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)
103	Աքվադետրիմ վիտամին D3 Aquadetrim Vitamin D3	կաթիլներ ներքին ընդունման	15000ՄՄ/մլ, 10մլ ապակե շշիկ
104	Ամինոկապրոնաթթու 5% լուծույթ Aminocaproic acid 5% solution	լուծույթ կաթիլաներարկ-ման	50մգ/մլ, 250մլ պլաստիկ փաթեթ
105	Վիկասոլ Vikasol	լուծույթ ներարկման	1%, 1մլ ամպուլներ (10)
106	Դիցինոն Dicynone	լուծույթ ներարկման	250մգ/2մլ, 2մլ ամպուլներ (4)
107	Հեպարին Heparin	լուծույթ ե/մ և ն/ե ներարկման	5000ՄՄ/մլ, 5մլ ապակե սրվակներ (5)
108	Ֆերում ԼԵԿ Ferrum LEK	օշարակ	50մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ
109	Օքսիտոցին Oxytocin	լուծույթ ներարկման	5ՄՄ/մլ, 1մլ ամպուլներ (5)
110	Կոնակիոն ՄՄ մանկական Konakion MM paediatric	լուծույթ ներարկման/ներ-քին ընդունման	2մգ/0,2մլ, 0,2մլ ամպուլներ (5) և դեղաչափիչ սարք
111	Ամպիցիլին ներարկման լուծույթի դեղափոշի 1000մգ Ampicillin powder for solution for injection 1000mg	դեղափոշի ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ (40)
112	Ամպիցիլին ներարկման լուծույթի դեղափոշի 500մգ Ampicillin powder for solution for injection 500mg	դեղափոշի ներարկման լուծույթի	500մգ, ապակե սրվակ (40)
113	Զինացեֆ 750մգ Zinacef 750mg	դեղափոշի ներարկման լուծույթի	750մգ, ապակե սրվակ
114	Բենզիլպենիցիլին Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի	1000000ՄՄ, ապակե սրվակ (50)
115	Պեո լիդոկայինով Peo with lidocaine	դեղափոշի մ/մ ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակ և 4մլ լուծիչ ամպուլում
116	Կանամիցին Kanamycin	դեղափոշի մ/մ ներարկման լուծույթի	1000մգ, սրվակներ (40)
117	Մետրոնիդազոլ Metronidazole	լուծույթ ն/ե կաթիլաներարկ- ման	5մգ/մլ, 100մլ պլաստիկ փաթեթ
118	Ամոկսիկլավ 2x 625մգ Amoksiklav 2x 625mg	դեղահատեր թաղանթապատ	500մգ+125մգ, բլիստերում (10/2x5/ և 14/2x7/)
119	Ամօքսիցիլին 250մգ/5մլ Amoxicillin 250mg/5ml	գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի	250մգ/5մ, 40գ գրանուլներ ապակե սրվակում 100մլ դեղակախույթի համար
120	Ամոկսիկլավ 312,5մգ/5մլ ֆորտե Amoksiklav 312,5mg/5ml forte	դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի	250մգ/5մլ+62,5մգ/5մլ, 25գ դեղափոշի ապակե շշիկում 100մլ դեղակախույթի համար և չափիչ գդալ
121	Ցիպրոֆլօքսացին Ciprofloxacin	դեղահատեր թաղանթապատ	500մգ (10)
122	Ամօքսիցիլին Amoxicillin	դեղապատիճներ	500մգ (100/10x10/)
123	Էրիթրոմիցին Erythromycin	դեղահատեր թաղանթապատ, աղելույծ	250մգ, բլիստեր (20/2x10/) և ապակե տարայում (10)
124	Ացիկլովիր Aciclovir	դեղահատեր	200մգ (20/2x10/)

125	Հիդրոքլորոթիազիդ Hydrochlorothiazide	դեղահատեր	25մգ (20)
126	Ֆուրոսեմիդ Furosemide	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
127	Ֆուրոսեմիդ Furosemide	դեղահատեր	40մգ, բլիստերում (28/2x14/)
128	Սպիրինոլակտոն 25մգ Spironolactone 25mg	դեղահատեր	25մգ, բլիստերում (20)
129	Տամոքսիֆեն Tamoxifen	դեղահատեր	20մգ, բլիստերում (30(3x10) և պլաստիկ տարայում (30)
130	Ցերեբրոլիզին Cerebrolysin	լուծույթ ներարկման	215,2մգ/մլ, 5մլ ամպուլներ (5)
131	Յինարիզին Cinnarizine	դեղահատեր	25մգ, բլիստերում (50)
132	Պիրացետամ Piracetam	լուծույթ ներարկման	200մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)
133	Պիրացետամ Piracetam	դեղապատիճներ	400մգ, բլիստերում (10 և 60/6x10/)
134	Կարսիլ թաղանթապատ դեղահատեր Carsil coated tablets	դեղահատեր թաղանթապատ	22,5մգ, բլիստերում (80/8x10/)
135	Սենադեքսին Senadexin	դեղահատեր	70մգ, բլիստերում (10), ստրիպում (10)
136	Մետոկլոպրամիդ Metoclopramide	լուծույթ ներարկման	5մգ/մլ (2մլ), 2մլ ամպուլներ (10)
137	Պրոզերին Proserin	լուծույթ ներարկման	0.05% (1մլ), 1մլ ամպուլներ (10)
138	Ռեհիդրոն Rehydron	դեղափոշի ներքին ընդունման լուծույթի	3.5գ+2.5գ+2.9գ+ 10գ, 18.9գ փաթեթիկներ (20)
139	Օմեպրազոլ Omeprazole	դեղապատիճներ	20մգ, պլաստիկ տարայում (28)
140	Քվամատել 20մգ Quamatel 20mg	դեղահատեր թաղանթապատ	20մգ, բլիստերում (28/2x14/)
141	Ֆամոտիդին 20մգ Famotidine 20mg	դեղահատեր թաղանթապատ	20մգ, բլիստերում (20/2x10/)
142	Լոպերամիդ Loperamide	դեղահատեր	2մգ (20/2x10/)
143	Բժշկական սպիրտ 96% Medical Alcohol 96%	լուծույթ արտաքին կիրառման	960մգ/մլ, 1լ, ապակե կամ պլաստիկ տարա
144	Բետադին լուծույթ Betadine solution	լուծույթ	100մգ/մլ, 30մլ,120մլ,1000մլ պլաստիկ շշիկ
145	Դիքլորիզոգլիանաթթվի նատրիումական աղ 86.8% և բարձր, ակտիվ քլոր 1,52	դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ)	86.8% և բարձր, ակտիվ քլոր 1,52, պլաստիկ տարայում (N300)
146	Յոդի 5% սպիրտային լուծույթ Iodine 5% alcoholic solution	լուծույթ	50մգ/մլ, 1000մլ, պլաստիկ շշիկ
147	Ջրածնի պերօքսիդի լուծույթ 3%	լուծույթ	3%, 1լ
148	Անուշադրի սպիրտ	ֆլակոն	10% 50մլ
149	Ֆուրացիլին 0,02 Furacillin 0.02	դեղահատ	փոշի 0,02գ
150	Ֆուրացիլին Furacillin	քսուք	25գ, պարկուճ
151	Լևոմեկոլ Levomocol	քսուք	7,5մգ/գ+40մգ/գ, 40գ, ալյումինե պարկուճ
152	Ալբենդազոլ 400մգ Albendazole 400mg	դեղահատեր ծամելու	400մգ, պլաստիկ տարայում (4)
153	Պիրանտել դեղահատեր Pyrantel tablets	դեղահատեր	250մգ, բլիստերում (3)
154	Լևոմիզոլ 150մգ Levamisolum 150mg	դեղահատեր	150մգ, բլիստերում
155	Սալբուտամոլ 4մգ albutamol 4mg	դեղահատեր	4մգ, բլիստերում (25/1x25/) և ապակե տարայում (30)
156	Էուֆիլին Euphylline	լուծույթ ներարկման	24մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)
157	Էուֆիլին Euphyllin	դեղահատեր	150մգ, բլիստերում (30/3x10/ և 30/2x15/)
158	Սուլֆոկամֆոկային 100մգ/մլ Sulfocamphocain 100mg/ml	լուծույթ ներարկման	49.6մգ/մլ+ 50.4մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
159	Բրոմհեքսին Bromhexin	դեղահատեր	8մգ, բլիստերում (50/5x10/, 50/2x25/)

160	Ամբրոքսոլ 15 Ambroxol 15	օշարակ	15մգ/5մլ, 100մլ ապակե կամ պլաստիկե շշիկ և չափիչ գդալ
161	ԱՅՑ 200 ACC 200	դեղահատեր դյուրալույծ	200մգ, պլաստիկե տարայում (20)
162	Սալբուտամոլ ցողացիր Salbutamol aerosol	ցողացիր շնչառման	100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ պլուսմինե տարայում, դեղաչափիչ մխոցով
163	Օձի պոլիվալենտ շիճուկ 10մլ	Լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	1 դեղաչափ, ամպուլ
164	AC անատոքսին 1մլ	Լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	1 դեղաչափ, ամպուլ
165	Հակակատաղային վակցինա 150ՄՄ	կոմպ.	1 դեղաչափ, ամպուլ
166	Հակաբոտուլինային վակցինա Ա Լ-թ	դոզա	1 դեղաչափ, ամպուլ
167	Հակաբոտուլինային վակցինա Բ Լ-թ	դոզա	1 դեղաչափ, ամպուլ
168	Հակաբոտուլինային վակցինա Ե Լ-թ	դոզա	1 դեղաչափ, ամպուլ
169	Նիստատին Nystatin	դեղահատեր թաղանթապատ	500000ՄՄ (20)
170	Ֆլուկոնազոլ Fluconazole	դեղապատիճներ	50մգ (1)
171	Ֆլուկոնազոլ Fluconazole	դեղապատիճներ	150մգ (1)
172	Դիպրիվան Diprivan	կիթ ն/ե ներարկման	10մգ/մլ, 20մլ ամպուլներ (5)
173	Նովոկային 0,5% 2մլ Novocain 0,5% 2ml	լուծույթ ներարկման	5մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
174	Բիսոպրոլոլ 5մգ դեղահատեր Bisoprolol 5mg tablets	դեղահատեր	5մգ (28)
175	Կարդոգրել 75մգ Cardogrel 75mg	դեղահատեր թաղանթապատ	75մգ, բլիստերում (30/3x10/)
176	Միլդրոնատ Mildronat	լուծույթ ներարկման	500մգ/5մլ, 5մլ ամպուլներ (10/2x5/)
177	Դոբուտամին Հեքսալ Dobutamin Hexal	դեղափոշի լիոֆիլացված, կաթիլաներարկ-ման լուծույթի	250մգ, ապակե սրվակ
178	Սիմվաստատին 10մգ Simvastatin 10mg	դեղահատեր թաղանթապատ	10մգ, բլիստերում (15(1x15), 30(3x10) և 30(2x15) և պլաստիկե տարայում (15 և 30)
179	Ատորվաստերոլ 10մգ Atorvastrol 10mg	դեղահատեր թաղանթապատ	10մգ, բլիստերում (30/3x10/)
180	Տրենտալ, խտանյութ ներարկման լուծույթի Trental, concentrate for solution for injection	խտանյութ կաթիլաներարկ- ման լուծույթի	20մգ/մլ, 5մլ ամպուլներ (5)
181	Ֆերում Լեկ 100մգ/2մլ Ferrum Lek 100mg/2ml	լուծույթ մ/մ ներարկման	100մգ/2մլ, 2մլ ամպուլներ (5 և 50)
182	Ֆրաքսիպարին 5700ՄՄ AXa/0,6մլ Fraxiparine 5700IU AXa/0,6ml	լուծույթ ներարկման	5700ՄՄ AXa/0.6մլ, 0.6մլ նախալցված ներարկիչներ (2, 10)
183	Ցեֆոտաքսիմ 1գ Cefotaxim 1g	դեղափոշի ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ (10 և 270)
184	Ազիթրոմիցին դեղապատիճներ 250մգ Azithromycin capsules 250mg	դեղապատիճներ	250մգ, բլիստերում (6), պլաստիկե տարայում (6)
185	Դօքսիցիկլին Doxycycline	դեղապատիճներ	100մգ, բլիստերում (10 և 20/2x10/)
186	Գենտամիցին Gentamicin	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	40մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)
187	Մեքսիդոլ 250մգ/5մլ Mexidol 250mg/5ml	լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	250մգ/5մլ, 5մլ ամպուլներ (5)
188	Միդոկալմ ներարկման լուծույթ Mydocalm solution for injection	լուծույթ ներարկման	100մգ/մլ+2,5մգ/մլ, 1մլ ամպուլներ (5)
189	Մուկալտին Mucaltin	դեղահատեր	50մգ, բլիստերում (10)
190	Գլիցերին ուղիղաղիքային մոմիկներ երեխաների Glycerin rectal suppositories for children	մոմիկներ ուղիղաղիքային	1գ (10)
191	Բիսակոդիլ Bisacodyl	մոմիկներ ուղիղաղիքային	10մգ (10)
192	Դյուֆալակ օշարակ	օշարակ	667մգ/մլ,

	Duphalac syrup		200մլ, պլաստիկե 22իկ, 15մլ փաթեթիկներ (10)
193	Վիշնևսկու նրբամածուկ Liniment Vishnevsky	նրբամածուկ	30մգ/գ+30մգ/գ, 25գ այլումինե պարկուճում
194	Հալվելի հեղուկ հանուկ Aloe liquid extract	լուծույթ ներարկման	1մլ, ամպուլներ (10)
195	Կրեոն 10000 Kreon 10000	դեղապատիճներ աղելույժ	150մգ, պլաստիկե տարայում (20,50,100)
196	Էսենցիալե Ն Essentiale N	լուծույթ ն/ե ներարկման	250մգ/5մլ, 5մլ ամպուլներ (5)
197	Լինեքս Linex	դեղապատիճներ	280մգ (1.2x107), բլիստերում (16) և ապակե տարայում (16)
198	Ածուխ ակտիվացված Charcoal activated	դեղահատեր	250մգ, բլիստերում (10)
199	Պերսեն Persen	դեղահատեր թաղանթապատ	35մգ+17,5մգ+ 17,5մգ, բլիստերում (40/4x10/)
200	Ֆինոպտին ներարկման լուծույթ Finoptin solution for injection	լուծույթ ներարկման	2.5մգ/մլ, 2մլ ամպուլներ (25)
201	Մօքսիցին կաթիլաներարկման լուծույթ Moxicin solution for infusion	լուծույթ կաթիլաներարկման	400մգ/250մլ, 250մլ պլաստիկե փաթեթ, անլուսաթափանց պարկում
202	Ցիպրո-Տեք 0,2% Cipro-Tech 0,2%	լուծույթ ներարկման	2մգ/մլ, 100մլ, 200մլ պլաստիկե փաթեթ

Դեղորայքի և պատվաստանյութերի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնք գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը)

գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում **դեղորայքի և պատվաստանյութերի** մատակարարումը¹:

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը²:

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.³

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

¹ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

² Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն կետը հրավերից հանվում է:

³ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն պարբերության 1-ին և 2-րդ կետերը հրավերից հանվում են:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելուց հետո մինչև **18.02.2016թ.-ը ժամը 14:00-ին**, ք.Նոյեմբեյան, Գարեգին Նժդեհի 15 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արփինե Գևորգյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

ե. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ⁴:

ը. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

թ. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

⁴ Մասնակիցը սույն կետով նախատեսված հայտարարությունը հայտով ներկայացնում է, եթե առաջարկում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ **2016թ. փետրվարի 18-ին ժամը 14:00-ին**, ք.Նոյեմբերյան, Գարեգին Նժդեհի 15 հասցեում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը:

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն⁵: Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա սահմանած⁶ փոխարժեքով:

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը, կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ

⁵ Եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը գերազանցում է գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա սույն ենթակետը հրավերից հանվում է: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:

⁶ Սահմանվում է Պատվիրատուի կողմից:

նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին⁷:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին⁸:

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցից ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5.3 Քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի
<< ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

<<ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի
<< ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ Ն Ի Ա Ռ Ա Զ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>>ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ
թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)					
Չափա- բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

***Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի
Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

<<ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի
<< ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

**ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՆԱԽՏԵՍՎԱԾ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սույնով-ն հայտարարում և
հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

***իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (եջվում է չափաբաժնի համարը) չափաբաժնում
(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է
(են) <<--- ---/--->> ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների (ապրանքների)
տեխնիկական բնութագրերին:***

Ընդ որում՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցից ճանաչվելու դեպքում պարտավորվում է
ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և
տեխնիկական բնութագրերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 4.2

<<ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի
<< ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի գնահատման համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սույնով-ն հայտարարում և
հավաստում է, որ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

իր կողմից հայտով առաջարկվող՝ (նշվում է չափաբաժնի համարը) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված
ապրանքը (ապրանքները) հանդիսանում է (են) Եվրասիական տնտեսական միության անդան երկրների
արտադրության ապրանք:

Ընդ որում ընտրված մասնակցի ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի
յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ
խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 5

<<ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի
<< ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Կից Ձեզ եմ ներկայացնում _____-ի՝ <<---ՇՀԱՊՁԲ---/--->>

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին
մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին
համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և
առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը²³:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

²³ Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, կամ եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա սույն նախադասությունը խմբագրվում է՝ նախատեսելով, որ մասնակիցը ներկայացնում է միայն իր կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/3>>

ք. Նոյեմբերյան

<< >> << >> 20 թ.

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Գաբրիելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<_____>> -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **դեղորայք և պատվաստանյութեր** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներքով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից:

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Մտացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Մտացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Մտացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ _____ ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան Պայմանագրի գինն է՝ Ապրանքի մնացած մասը կմատակարարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի²⁴:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2016թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը (առնվազն 365 օրացուցային օրը)²⁵:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները²⁶:

²⁴ Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է:

²⁵ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:

²⁶ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը²⁷:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով²⁸:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

²⁷ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

²⁸ Պայմանագրին օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի

կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները²⁹:

9.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 90 օրացուցային օրով:

9.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է ----- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՆՈՑԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
Ք.Նոյեմբերյան, Գարեգին Նժդեհի 15
«Արդշինբանկ» Նոյեմբերյանի մասնաճյուղ ՓԲԸ
Հ/Հ 2476800967620010
ՀՎՀՀ 07404792

ՎԱՃԱՌՈՂ

.....
.....
.....
.....
.....

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

²⁹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ**

Դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը

Հ/Հ	Առևտրային անվանումը	միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)	Քանակը
1	2	3	4	5	6
1	Պրոմեդոլ Promedol	տրիմեպերիդին (տրիմեպերիդինի հիդրոքլորիդ) trimeperidine (trimeperidine hydrochloride)	լուծույթ մ/մ և ե/մ ներարկման	20մգ/մլ, 1մլ ամպուլներ (100/20x5))	70
2	Ֆենտանիլ 0,005% ներարկման լուծույթ Fentanyl 0,005% solution for injection	ֆենտանիլ fentanyl	լուծույթ ներարկման	0,05մգ/մլ, 2մլ ամպուլներ (100/20x5/)	300
3	Մորֆինի հիդրոքլորիդ 1% ներարկման լուծույթ Morphine hydrochloride 1% solution for injection	մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ) morphine (morphine hydrochloride)	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (100/20x5/)	40

4	Դիազեպամ Ալկալոիդ 10մգ/2մլ Diazepam Alkaloid 10mg/2ml	դիազեպամ diazepam	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	10մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10)	300
5	Դիազեպամ 5մգ Diazepam 5mg	դիազեպամ diazepam	դեղահատեր	5մգ (24)	200
6	Դիթիլին Dithylin	սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ) suxamethonium (suxamethonium iodide)	լուծույթ ներարկման	20մգ/մլ, 5մլ ամպուլներ (5, 10/1x10/, 10/2x5/)	600
7	Թիոպենտալ 0,5գ Thiopental 0,5g	թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium)	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	500մգ, ապակե սրվակներ (40)	50
8	Կալիպսոլ Calypsol	կետամին (կետամինի հիդրոքլորիդ) ketamine (ketamine hydrochloride)	լուծույթ ներարկման	500մգ/10մլ, 10մլ սրվակներ (5)	25
9	Միդազեմ 15մգ/3մլ Midazem 15mg/3ml	միդազոլամ midazolam	լուծույթ ներարկման	15մգ/3մլ, 3մլ ամպուլներ (5)	50
10	Տրակրիում Tracrium	ատրակուրիում (ատրակուրիումի բեզիլատ) atracurium (atracurium besilate)	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 2,5մլ ամպուլներ (5)	260
11	Թիոպենտալ 1գ Thiopental 1g	թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium)	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ (40)	35
12	Անալգին Analgin	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում) metamizole (metamizole sodium)	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	500մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	3300
13	Կետոնալ 100մգ/2մլ ներարկման լուծույթ Ketonal 100mg/2ml solution for injection	կետոպրոֆեն ketoprofen	լուծույթ ներարկման	100մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10/2x5/)	350
14	Լիդոկայինի հիդրոքլորիդ Lidocaine hydrochloride	լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride)	լուծույթ մ/մ և ն/ե ներարկման	20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	250
15	Նովոկային 0,5% լուծույթ Novocain 0,5% solution	պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) procaine (procaine hydrochloride)	լուծույթ ներարկման	5մգ/մլ, 250մլ պլաստիկ տարա	80
16	Դիկլոֆենակ 25մգ/մլ Diclofenac 25mg/ml	դիկլոֆենակ (դիկլոֆենակի նատրիում) diclofenac (diclofenac sodium)	լուծույթ մ/մ ներարկման	25մգ/մլ, 3մլ ամպուլներ (5)	400
17	Դիկլոֆենակ 50մգ Diclofenac 50mg	դիկլոֆենակ (դիկլոֆենակի նատրիում) diclofenac (diclofenac sodium)	դեղահատեր թաղանթապատ, աղելույծ	50մգ, բլիստերում (20/2x10/)	500
18	Ացետիլսալիցիլաթթու Acetylsalicylic acid	ացետիլսալիցիլաթթու acetylsalicylic acid	դեղահատեր	500մգ, բլիստերում (10)	800

19	Պարացետամոլ Paracetamol	պարացետամոլ paracetamol	դեղահատեր	500մգ, բլիստերում (10)	1000
20	Պարացետամոլ երեխաների համար Paracetamol for children	պարացետամոլ paracetamol	դեղակախույթ ներքին ընդունման	120մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ	40
21	Բիսեպտոլ Biseptol	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ sulfamethoxazole, trimethoprim	դեղահատեր	400մգ+80մգ (20)	1000
22	Բուպիվակային ՎՊՎ Սպինալ 0,5% Հեվի Bupivacaine WPW Spinal 0,5% Heavy	բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride)	լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	5մգ/մլ, 4մլ ամպուլներ (5)	120
23	Սպազմալգոն ներարկման լուծույթ 2մլ Spasmalgon solution for injection 2ml	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ metamizole (metamizole sodium), pitofenone (pitofenone hydrochloride), fempiverinium bromide	լուծույթ ներարկման	1000մգ/2մլ+4մգ/2մլ+ 0,04մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10)	200
24	Սպազմալգոն ներարկման լուծույթ 5մլ Spasmalgon solution for injection 5ml	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ metamizole (metamizole sodium), pitofenone (pitofenone hydrochloride), fempiverinium bromide	լուծույթ ներարկման	2500մգ/5մլ+10մգ/5մլ+0,1 մգ/5մլ, 5մլ ամպուլներ (5,10)	50
25	Դրոտավերին Drotaverine	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) drotaverine (drotaverine hydrochloride)	լուծույթ ներարկման	40մգ/2մլ (2մլ), 2մլ ամպուլներ (10)	500
26	Դրոտավերինի հիդրոքլորիդ Drotaverine hydrochloride	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) drotaverine (drotaverine hydrochloride)	դեղահատեր	40մգ, բլիստերում (20/2x10/)	200
27	Ատրոպինի սուլֆատ Atropine sulfate	ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate)	լուծույթ ներարկման	1մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	250
28	Պապավերինի հիդրոքլորիդ 2% ներարկման լուծույթ Papaverin hydrochloride 2% solution for injection	պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ) papaverine (papaverine hydrochloride)	լուծույթ ներարկման	20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	150
29	Մագնեզիումի սուլֆատ Magnesium sulfate	մագնեզիումի սուլֆատ magnesium sulfate	լուծույթ ներարկման	250մգ/մլ, 5մլ ամպուլներ (10/1x10/ 10/2x5/)	600
30	Պրոնորան Pronoran	պիրիբեդիլ piribedil	դեղահատեր թաղանթապատ, երկարատև ձերբազատմամբ	50մգ, բլիստերում (30/2x15/)	450
31	Պոլիգլուկին Polyglucin	դեքստրան (դեքստրան 70) dextran (dextran 70)	լուծույթ կաթիլաներարկ- ման	60մգ/մլ, 250մլ, պլաստիկ փաթեթ	30
32	Պոլիգլուկին Polyglucin	դեքստրան (դեքստրան 70) dextran (dextran 70)	լուծույթ կաթիլաներարկ- ման	60մգ/մլ, 500մլ, պլաստիկ փաթեթ	70

33	Ռեոպոլիգլյուկին Rheopolyglucin	դեքստրան (դեքստրան 40) dextran (dextran 40)	լուծույթ կաթիլաներարկ- ման	100մգ/մլ, 250մլ, պլաստիկե փաթեթ	25
34	Ռեոպոլիգլյուկին Rheopolyglucin	դեքստրան (դեքստրան 40) dextran (dextran 40)	լուծույթ կաթիլաներարկ- ման	100մգ/մլ, 500մլ պլաստիկե փաթեթ	40
35	Հեմոդեզ Haemodesum	պոլիվինիլպիրոլիդոն, նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ, նատրիումի հիդրոկարբոնատ polyvinylpyrrolidone, sodium chloride, potassium chloride, calcium chloride, magnesium chloride, sodium hydrocarbonate	լուծույթ կաթիլաներարկ- ման	60մգ/մլ+5,5մգ/մլ+ 0,42մգ/մլ+0,38մգ/մլ+ 0,005մգ/մլ+0,23մգ/մլ, 250մլ, պլաստիկե փաթեթ	70
36	Հեմոդեզ Haemodesum	պոլիվինիլպիրոլիդոն, նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ, նատրիումի հիդրոկարբոնատ polyvinylpyrrolidone, sodium chloride, potassium chloride, calcium chloride, magnesium chloride, sodium hydrocarbonate	լուծույթ կաթիլաներարկ- ման	60մգ/մլ+5,5մգ/մլ+ 0,42մգ/մլ+0,38մգ/մլ+ 0,005մգ/մլ+0,23մգ/մլ, 500մլ պլաստիկե փաթեթ	70
37	Գլյուկոզ Glucosa	դեքստրոզ (դեքստրոզի մոնոհիդրատ) dextrose (dextrose monohydrate)	լուծույթ կաթիլաներարկ- ման	50մգ/մլ, 250մլ, պլաստիկե փաթեթ	700
38	Գլյուկոզ Glucosa	դեքստրոզ (դեքստրոզի մոնոհիդրատ) dextrose (dextrose monohydrate)	լուծույթ կաթիլաներարկ- ման	50մգ/մլ, 500մլ, պլաստիկե փաթեթ	1000
39	Գլյուկոզ 10% Glucose 10%	դեքստրոզ dextrose	լուծույթ կաթիլաներարկ- ման	100մգ/մլ, 200մլ, պլաստիկե փաթեթ	80
40	Նատրիումի քլորիդ Sodium chloride	նատրիումի քլորիդ sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ- ման	9մգ/մլ, 250մլ, պլաստիկե փաթեթ	1000
41	Նատրիումի քլորիդ Sodium chloride	նատրիումի քլորիդ sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ- ման	9մգ/մլ, 500մլ, պլաստիկե փաթեթ	1300
42	Նատրիումի քլորիդ Sodium chloride	նատրիումի քլորիդ sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ- ման	9մգ/մլ, 100մլ, պլաստիկե փաթեթ	1000
43	Նատրիումի քլորիդ Sodium chloride	նատրիումի քլորիդ sodium chloride	լուծույթ կաթիլաներարկ- ման	9մգ/մլ, 1000մլ, պլաստիկե փաթեթ	3000
44	Ռինգեր Ringer	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ sodium chloride, potassium chloride, calcium chloride	լուծույթ կաթիլաներարկ- ման	8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,33մգ/մլ, 250մլ, պլաստիկե փաթեթ	500
45	Ռինգեր Ringer	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ sodium chloride, potassium chloride, calcium chloride	լուծույթ կաթիլաներարկ- ման	8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,33մգ/ մլ, 500մլ, պլաստիկե փաթեթ	1500

46	Կալիումի քլորիդ Kalium chloride	կալիումի քլորիդ potassium chloride	լուծույթ ն/ե կաթիլաներարկ- ման	40մգ/մլ, 200մլ պլաստիկ փաթեթ	20
47	ՕսլաԴեքս OslaDex	հիդրօքսիէթիլ օսլա hydroxyethyl starch	լուծույթ կաթիլաներարկ- ման	60մգ/մլ, 500մլ պլաստիկ փաթեթներ	16
48	Մանի-Տեք Manni-Tech	մանիտոլ mannitol	լուծույթ կաթիլաներարկ- ման	10մգ/մլ, 400մլ, պլաստիկ տարա	20
49	Նատրիումի հիդրոկարբոնատ 8,4% 20մլ	Նատրիումի հիդրոկարբոնատ	լուծույթ ներարկման	8,4%, 20մլ	20
50	Ջուր ներարկման 500մլ Water for injection 500ml	ջուր ներարկման water for injection	լուծույթ ներարկման	500մլ, պլաստիկ փաթեթ	15
51	Ջուր ներարկման Water for injection	ջուր ներարկման water for injection	լուծույթ ներարկման	1մլ, 2մլ ամպուլներ (10)	200
52	Ջուր թորած 3000մլ	Ջուր թորած	լուծույթ ներարկման	3000մլ, ֆլակոն	15
53	Նատրիումի քլորիդ Sodium chloride	նատրիումի քլորիդ sodium chloride	լուծույթ ներարկման	9մգ/մլ, 5մլ, 5մլ ամպուլներ (10, 10/2x5/)	500
54	Գլյուկոզ 40% Glucosa 40%	դեքստրոզ dextrose	լուծույթ ներարկման	400մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)	600
55	Դեքսամեթազոն Dexamethasone	դեքսամեթազոն (դեքսամեթազոնի նատրիումական ֆոսֆատ) dexamethasone (dexamethasone sodium phosphate)	լուծույթ ներարկման	4մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	1500
56	Դիմեդրոլ Dimedrol	դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride)	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	3500
57	Դիմեդրոլ Dimedrol	դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ diphenhydramine hydrochloride	դեղահատեր	50մգ (10)	40
58	Պրեդնիզոլոն Prednisolon	պրեդնիզոլոն prednisolone	դեղահատեր	5մգ, բլիստերում (100/10x10/)	500
59	Կալցիումի գլյուկոնատ Calcium gluconate	կալցիումի գլյուկոնատ calcium gluconate	լուծույթ ներարկման	1գ/10մլ (5մլ), 5մլ ամպուլներ (10)	200
60	Նատրիումի թիոսուլֆատ Sodium thiosulfate	նատրիումի թիոսուլֆատ sodium thiosulfate	լուծույթ ն/ե ներարկման	300մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)	200
61	Կալցիումի գլյուկոնատ Calcium gluconate	կալցիումի գլյուկոնատ calcium gluconate	դեղահատեր	500մգ (10)	200
62	Ստրոֆանտին-Գ Strophanthin-G	ուաբային ouabain	լուծույթ ներարկման	0,25մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	50
63	Նիտրո Nitro	նիտրոգլիցերին nitroglycerin	խտանյութ կաթիլաներարկ- ման լուծույթի	5մգ/մլ, 2մլ ամպուլներ (5)	20
64	Կորդարոն Cordarone	ամիոդարոն amiodarone	լուծույթ ներարկման	150մգ/3մլ (3մլ), 3մլ ամպուլներ (6)	300
65	Կորդարոն Cordarone	ամիոդարոն amiodarone	դեղահատեր բաժանելի	200մգ (30)	300

66	Էգիլոկ Egilok	մետոպրոլոլ metoprolol	դեղահատեր	25մգ, ապակե տարայում (60)	700
67	Կարդիկետ Kardiket	իզոսորբիդի դինիտրատ isosorbide dinitrate	դեղահատեր երկարատևձերբա զատմամբ	40մգ, բլիստերում (20/2x10/, 50/5x10/)	400
68	Էնալապրիլ 10մգ Enalapril 10mg	Էնալապրիլ (էնալապրիլի մալեատ) enalapril (enalapril maleate)	դեղահատեր	10մգ, բլիստերում (20/2x10/)	1000
69	Նիտրոգլիցերին Nitroglycerin	գլիցերիլի եռնիտրատ glyceryl trinitrate	դեղահատեր ենթալեզվային	0.5մգ (40)	100
70	Դիգոքսին Digoxin	դիգոքսին digoxin	դեղահատեր	0,25մգ, բլիստերում (40)	500
71	Պանանգին Panangin	մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ) magnesium aspartate (magnesium aspartate tetrahydrate), potassium aspartate (potassium aspartate hemihydrate)	խտանյութ կաթիլաներարկ- ման լուծույթի	400մգ/10մլ+ 452մգ/10մլ, 10մլ ամպուլներ (5)	250
72	Նիֆեդիպին Nifedipin	նիֆեդիպին nifedipine	դեղահատեր թաղանթապատ	10մգ, բլիստերում (50/5x10/)	200
73	Ատենոլոլ 50մգ Atenolol 50mg	ատենոլոլ atenolol	դեղահատեր	50մգ, բլիստերում (30/3x10/)	200
74	Ամլոդիպին Amlodipine	ամլոդիպինի բեզիլատ amlodipine besilate	դեղահատեր բաժանելի	5մգ (10)	600
75	Ամլոդիպին Amlodipine	ամլոդիպինի բեզիլատ amlodipine besilate	դեղահատեր բաժանելի	10մգ (10)	800
76	Ադրենալին Adrenalin	էպինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) epinephrine (epinephrine hydrotartrate)	լուծույթ ներարկման	1,82մգ/մլ, 1մլ ամպուլներ բլիստերում (5, 10/2x5/), 1մլ ամպուլներ (5,10)	30
77	Կոֆեին-նատրիումի բենզոատ Coffein-natrium benzoate	կոֆեին նատրիումի բենզոատ caffeine-sodium benzoate	լուծույթ ներարկման	0.1գ/մլ (1մլ), 1մլ ամպուլներ (10)	200
78	Վալիդոլ Validol	մենթոլ, իզովալերաթթվի մենթիլ էսթեր menthol, isovaleric acid menthyl ether	դեղահատեր	0.06գ, (6,12/2x6/, 10, 20)	400
79	Դիբազոլ ներարկման լուծույթ 1մլ Dibazol solution for injection 1ml	բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ) bendazol (bendazol hydrochloride)	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	1500
80	Կորդիամին Cordiamin	նիկեթամիդ nikethamide	լուծույթ ներարկման	250մգ/մլ (2մլ), 2մլ ամպուլներ (5, 10)	130
81	Կատվախտի հանուկ Valerian extract	կատվախտի հանուկ valerianae extract	դեղահատեր թաղանթապատ	20մգ, բլիստերում (10) և ապակե տարայում (50)	500
82	Կատվախտի ոգեթուրմ Valeriane tincture	կատվախտի հանուկ valeriane extract	ոգեթուրմ	200մգ/մլ, 30մլ ապակե շշիկ	20
83	Մեզատոն Mesaton	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) phenylephrine	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	20

		(phenylephrine hydrochloride)			
84	Պրեստարիում 5մգ Prestarium 5mg	պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին) perindopril (perindopril arginine)	դեղահատեր թաղանթապատ	5մգ, պլաստիկ տարայում (30)	500
85	Գլյուկոզի նկալիումի քլորիդի լուծույթ Solution glucose with potassium chloride	դեքստրոզ, կալիումի քլորիդ dextrose, potassium chloride	լուծույթ, կաթիլաներարկման	45,04մգ/մլ + 3,96մգ/մլ, 222մլ, պլաստիկ փաթեթ	30
86	Դիգոքսին Digoxin	դիգոքսին digoxin	լուծույթ ներարկման	0,25մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	20
87	Լիզինոպրիլ Lisinopril	լիզինոպրիլ (լիզինոպրիլի դիհիդրատ) lisinopril (lisinopril dihydrate)	դեղահատեր	20մգ, բլիստերում (20/2x10/)	300
88	Դոպամին Dopmin	դոպամին (դոպամինի հիդրոքլորիդ) dopamine (dopamine hydrochloride)	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի	40մգ/մլ, 5մլ ամպուլներ (5)	10
89	Անապրիլին 40մգ Anaprilin 40mg	պրոպրանոլոլ propranolol	դեղահատեր	40մգ (50/5x10/, 50/2x25/)	200
90	Կարվեդիլոլ 12,5մգ Carvedilol 12,5mg	կարվեդիլոլ carvedilol	դեղահատեր	12,5մգ, բլիստերում (40/4x10/)	1200
91	Էնալապրիլ 5մգ Enalapril 5mg	Էնալապրիլ (Էնալապրիլի մալեատ) enalapril (enalapril maleate)	դեղահատեր	5մգ, բլիստերում (20/2x10/)	800
92	Կարմետադին Carmetadine	տրիմետազոլին (տրիմետազոլինի դիհիդրոքլորիդ) trimetazidine (trimetazidine dihydrochloride)	դեղահատեր թաղանթապատ, կարգավորվող ձերբազատամբ	35մգ (60/2x30/)	300
93	Կապտոպրիլ Captopril	կապտոպրիլ captopril	դեղահատեր	25մգ, բլիստերում (20/2x10/)	1000
94	Կոկարբօքսիլազի հիդրոքլորիդ Cocarbonylase hydrochloride	կոկարբօքսիլազ (կոկարբօքսիլազի հիդրոքլորիդ) cocarbonylase (cocarbonylase hydrochloride)	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	50մգ, ամպուլներ (5)	300
95	Վիտամին C- Ասկորբինաթթու 5% 2մլ Vitamin C-Ascorbic acid 5% 2ml	ասկորբինաթթու ascorbic acid	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	1200
96	Վիտամին C- Ասկորբինաթթու 5% 5մլ Vitamin C-Ascorbic acid 5% 5ml	ասկորբինաթթու ascorbic acid	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 5մլ ամպուլներ (10)	250
97	Ասկորբինաթթու գլյուկոզով Ascorbic acid with glucose	ասկորբինաթթու, գլյուկոզ ascorbic acid, glucose	դեղահատեր	100մգ+877մգ (10)	1500

98	Վիտամին B համալիր Vitamin B complex	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավինի նատրիումական ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ thiamine (thiamine hydrochloride), riboflavin (riboflavin sodium phosphate), pyridoxine (pyridoxine hydrochloride), nicotinamide	լուծույթ ներարկման	10մգ/2մլ+2մգ/2մլ+ 10մգ/2մլ+ 100մգ/2մլ, 2մլ ամպուլներ (10)	100
99	Վիտամին B6 (Պիրիդոքսին) Vitamin (Pyridoxine)	պիրիդոքսինի հիդրոքլորիդ pyridoxine hydrochloride	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	350
100	Վիտամին B12- Ցիանոկոբալամին Vitamin B12- Cyanocobalamin	ցիանոկոբալամին cyanocobalamin	լուծույթ ներարկման	0.5մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	130
101	Վիտամին B1-թիամինի քլորիդ Vitamin B1- Thiamine chloride	թիամինի քլորիդ thiamine chloride	լուծույթ ներարկման	50մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	100
102	Նիկոտինաթթու Nicotinic acid	նիկոտինաթթու nicotinic acid	լուծույթ ներարկման	10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	80
103	Աքվադետրիմ վիտամին D3 Aquadetrim Vitamin D3	խոլեկալցիֆերոլ cholecalciferol	կաթիլներ ներքին ընդունման	15000ՄՄ/մլ, 10մլ ապակե շշիկ	120
104	Ամինոկապրոնաթթու 5% լուծույթ Aminocaproic acid 5% solution	ամինոկապրոնաթթու aminocaproic acid	լուծույթ կաթիլաներարկ- ման	50մգ/մլ, 250մլ պլաստիկ փաթեթ	200
105	Վիկասոլ Vikasol	մենադիոնի նատրիումի բիսուլֆիտ menadione sodium bisulfite	լուծույթ ներարկման	1%, 1մլ ամպուլներ (10)	50
106	Դիցինոն Dicynone	էտամզիլատ etamsylate	լուծույթ ներարկման	250մգ/2մլ, 2մլ ամպուլներ (4)	600
